

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

_____ի 2015 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
19-ի N 589 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N45-Ա որոշման N2 հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետը Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության անտառներում հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 589 որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետի ա) ենթակետում «փշատերև» բառը փոխարինել «ասեղնատերև» բառով,

2) 2-րդ կետում «ժամանակաշրջանում» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը,» բառերը, իսկ «դրա համակարգի ձեռնարկությունները» բառերը փոխարինել «դրանց համակարգի կազմակերպությունները» բառերով,

3) 3-րդ և 4-րդ կետերում «անտառային ֆոնդի» բառերը փոխարինել «անտառների և անտառային հողերի» բառերով,

4) 5-րդ կետում «կուլտուր-մասսայական և այլ» բառերը փոխարինել «մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով» բառերով,

5) 5-րդ բաժնի վերնագրում և 10-րդ կետում «կուլտուր-մասսայական և ռեկրեացիոն» բառերը փոխարինել «մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով»,

6) 6-րդ բաժինը հանել,

7) 13-րդ կետի.

ա. ե) ենթակետում «առավել» բառից առաջ լրացնել «օգտվել հրդեհավտանգության քարտեզից,» բառերը,

բ. է) ենթակետում «անտառային ֆոնդի տարածքում» բառերը փոխարինել «անտառներում և անտառային հողերում» բառերով,

գ. ը) ենթակետում «տարածքային կառավարման և» բառերից հետո լրացնել «արտակարգ իրավիճակների» բառերը,

դ. ը) ենթակետից հետո լրացնել նոր թ) ենթակետ, հետևյալ բովանդակությամբ. «թ) յուրաքանչյուր տարի մինչև մարտի 31-ը մշակում, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության մարզային ծառայությունների համաձայնեցմանն ու Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի հաստատմանն են ներկայացնում հակահրդեհային պահպանության համալիր միջոցառումների ծրագիրը, որտեղ նախատեսվում են ծագած անտառային հրդեհների մարման համար մարզի ազգաբնակչության ներգրավման, համապատասխան տեխնիկայի և տրանսպորտի տրամադրման, պահեստային վառելանյութի պաշարի առանձնացման, ինչպես նաև հրդեհների մարման գործում ներգրավված անձանց սպասարկման, սննդի, խմելու ջրով ապահովելու և անհրաժեշտության դեպքում՝ առաջին բուժօգնություն ցուցաբերելու պայմանները:»,

8) 14-րդ կետում «տարածքային կառավարման» բառերից հետո լրացնել « և արտակարգ իրավիճակների» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Անհրաժեշտությունը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումն հնարավորություն կտա ամբողջացնել իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտը և խուսափել ավելորդ հղումներից:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի նախատեսում գործող քաղաքականության փոփոխություն:

Անտառային տնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործմանը:

Կարգավորման նպատակը և բնույթը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը հաստատվելուց հետո :

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

Ակնկալվող արդյունքը՝ Իրավական ակտի համապատասխանեցում գործող օրենսդրությանը:

Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական նվազեցում չի առաջանում: